

## ՆԱԽԱԳԱՆ ԱՍՍՏ. «ՊԱՂԵՍՏԻՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԸ ԿԱՌՉԱԾ ՄՆԱՅ ԻՐ ԴԱՏԻՆ»

Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ Նախագահեց Պասա Կուսակցութեան կեդրոնական յանձնախումբին կուսակցական ընտրութիւններու առնչուող ժողովին:



Նախագահ Ասատ շեշտեց, որ պատերազմը այսօր ճշմարտութեան պատերազմն է: Պաղեստինի մէջ պատահածը սեռ-նիստութեան գերիշխանութիւնը տկարացուց համաշխարհային գետնի վրայ եւ փաստեց, որ դատին կամչիլը կը փրկէ հայրենիքը: Պաղեստինի ժողովուրդը մնաց կամչած իր դատին: Նախագահ Ասատ յայտնեց, որ արեւմուտքի պատասխանատուներուն «Իսրայէլը» պաշտպանելու համար գործած յարձակումները կը նմանին մօր մը զաւակին պաշտպանելուն, որովհետեւ «Իսրայէլ» բռնատիրութեան օրինական գաւակն է:

Նախագահը շեշտեց, որ ներկայ պատերազմը ճշմարտութեան պատերազմն է: Ծճարտութեան յաղթողը պատերազմին կը յաղթէ, իսկ վերջին քանի մը տարիներուն Պաղեստինի մէջ պատահածը Պաղեստինեան դատին տուաւ համաշխարհային մասշտապ:

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԶՕՐԱԿՅԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՏՈՒՄ «ԼԻՈՒԱ ԱԼ-ՔՈՒՏԱ»-Ի ՂԵԿԱՎԱՐԻՆ

Զորքը շարքի, 20 Դեկտեմբեր 2023-ի առաւօտուն, Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, պատուիրակութեամբ զօրակցական այցելութիւն տուաւ «Լիուա ալ-Քուտս»-ի ղեկավար երկրչփ. Մուհամմետ ալ-Սաաիտին եւ անոր փոխանորդ Աատել Ապտ ալ-Յաբին: Սրբազան Զօր ընկերակցող պատուիրակութեան մաս կը կազմէին Ազգ. Վարչութեան անդամ երկրչփ. Յարութ Աւրնեան եւ Սուրիոյ Յայ Դատի Կեդրոնական յանձնախումբի



ատենապետ տիար Ծերուն Գահուէճեան: Սրբազան Յայոց Թեմի ժողովականութեան եւ ժողովուրդին անունով զօրակցութիւն յայտնեց Կազգայի մեր եղբայրներուն եւ աղօթեց առ բարձեալն Աստուած, որ աստուածային օրհնութեամբ յաղթական դուրս գան պատերազմէն:

Սրբազան Յայոց անդրադարձաւ Գերմանիոյ մէջ իր ունեցած հարցազրոյցներուն, որոնց ընթացքին ան կոչ ուղղած է միջազգային կազմակերպութիւններուն, պահանջելով, որ միջամտեն խաղաղ բնակչութեան դէմ գործուած ցեղասպանութիւնները դադրեցնելու եւ օգնեն ապահովութեան եւ խաղաղութեան հաստատումին:



ՀԱՆԳԻՍ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս  
և Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութիւնը սրտի դառն կակիծով կը գումեն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութեան երիցագոյն անդամներն՝

## Տ. ՍՈՒՐԵՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԻ (1939-2023)

վախճանումը, որ պատահեցաւ Կիրակի, 17 Դեկտեմբեր 2023-ի առաւօտեան, Մոնթրէալի (Գանատա) մէջ:

ԴԻՎԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

## ԳՈՅԺ

Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանը եւ Ազգային Իշխանութիւնը սրտի խոր կակիծով կը գումեն Բերիոյ Յայոց Թեմի նախկին երկարամեայ անձնադիր ծառայութիւն ունեցած, շինարար եւ սուրիահայութեան եկեղեցական-ազգային կեանքը պայծառացուցած վաստակաշատ Առաջնորդ



## ԳԵՐՇ. Տ. ՍՈՒՐԵՆ Ս. ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԻ

վախճանումը, որ պատահեցաւ Կիրակի, 17 Դեկտեմբեր 2023-ին, Քանատայի մէջ:

Այս տխուր առիթով, Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Ազգային Երեսփոխանական Ժողովը, Ազգային Վարչութիւնն ու Ազգային Կրօնական Ժողովը իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Յայրապետին, Կաթողիկոսութեան միաբաններուն, վախճանեալ Սրբազանին ընտանիքին եւ հարազատներուն, աղօթելով առ բարձեալն Աստուած, որ Սրբազան Զօր հոգին խաղաղութեան մէջ պահէ եւ Երկիւնքի Արքայութեան արժանացնէ:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

**«Գանձասար» կը շնորհաւորէ ձեզ Նոր Տարուան եւ Ս. Ծնունդին առիթներով, մաղթելով արեւշաքութիւն, յաջողութիւն եւ ազգիս հայոց ձեռքբերումներու պանծալի տարի մը:**

**«Գանձասար»-ի յաջորդ համարը լոյս պիտի տեսնէ 11 Յունուար 2024-ին:**

## Տեղական Լրագրող

### Խմբագրական

### ՏԱՐԻՆ ԿՐ ՓԱԿԵՆՔ ԱՐՑԱԽԻ ԿՈՐՈՒՄՏԻՆ ԽՈՐ ՑԱԽՎ

2023-ը կը փակենք տխուր էջով մը, որուն վրայ պատմութիւնը պիտի արձանագրէ Արցախի կորուստը, Արցախի յանձնումը, արցախցի մեր ազգակիցներուն բռնի տեղահանումը եւ Արցախի պետական այրերուն Ատրպեյճանի բանտերուն մէջ ձերբակալուած մնալը:

Արցախի ժողովուրդին իրաւունքները բոլորովին անտեսուեցան, իսկ Ատրպեյճան հայկական հողի մշակութային ժառանգութիւնը աստիճանաբար քանդելու եւ աղաւաղելու լծուած է, որպէսզի ոչ միայն Արցախի հայկականութիւնը հերքէ ու հերքել տայ ողջ աշխարհին, այլեւ նսեմացնէ հայութիւնն ու իր մշակոյթը թըշնամական իր վերաբերմունքով:

Արցախը հայկական է, ունեցած է անկախ կարգավիճակ ոչ միայն Արցախի Հանրապետութեան կերտումով, ժողովրդային հանրաքուէով, այլ նոյնիսկ Խորհրդային Միութեան տարիներուն:

Մինչ երեւանը տօնածառի լոյսերով կը պսպղայ, կսկիծը կը պատէ բոլորիս սրտերը, որովհետեւ տարին կը փակենք առանց Արցախի, կամ իր բնիկ ժողովուրդէն դատարկուած Արցախով:

Արցախի հայկականութիւնը կարելի չէ ուրանալ՝ խաղաղութեան պայմանագրերու խաբուսիկ շղարշով կամ միջազգային դերակատարներու կամակատարութեան պարտադրանքին տակ, քանի որ Արցախը միայն հողատարածք չէ, Արցախը պայքարի օրրան է, մշակութային ժառանգութիւն է, նահատակներու արեամբ սրբացած հայրենիք է:

Արցախի ժողովուրդի իրաւունքներն ու անվտանգութեան հարցերը մէկընդմիջտ հանուեցան բանակցութիւններու օրակարգերէն: Մէկ խօսքով պատմական մեր հայրենիքի մէկ մասը կորսնցուցինք ու մեզ կը ստիպեն մոռնալ հայկական այդ հողը՝ յանուն խաղաղութեան:

Բայց միթէ՞ խաղաղութիւն կարելի է հաստատել անարգելով նոյնիսկ պարտուող կողմին տարրական իրաւունքները, իր հայրենի հողին վրայ ապրելու միջազգային, մարդկային իրաւունքը:

Ինչո՞ւ Հայաստան տեր չի կանգնիր արցախցիներուն, որպէսզի իրենց հողին վրայ, իրենց ծննդավայրին մէջ ապրին: Այդ ո՞ր միջազգային օրէնքն է, որ հաշտ աչքով կը դիտէ ժողովուրդի մը զանգուածային տեղահանումը իր հայրենիքէն ու վերադարձի կամուրջներու մէկընդմիջտ այրումը:

Տարին կը փակենք ու տակաւին ոչ մէկ յոյս Արցախի մէջ ապօրինաբար ձերբակալուածներու ազատ արձակման մասին: Ձերբակալուած են մարդիկ, որոնք իրենց ժողովուրդի ձայնին անսալով ստանձնած են պետական պաշտօններ ու ապրելու խաղաղ ու ազատ միջավայր ստեղծելով, Արցախի ինքնորոշման իրաւունքի միջազգային իրաւունքէն մեկնելով սատարած արցախցիներու բնականոն կեանքին:

Անոնք մեր հպարտութիւնն էին, մեր ազգի կամարտայայտութեան վկաները, բայց տակաւին չենք յաջողած միջոցներ գտնել դուրս բերելու գիրենք Ատրպեյճանի բանտերէն:

Ի՞նչ խաղաղութեան համաձայնագրի մասին կը խօսուի Արցախի ժողովուրդին հաշուոյն, խաղաղութեան պայմանագիրը արդիւնաւորուելու համար պիտի բխի երկու կողմերու իրաւունքներէն, այլապէս ոչ թէ խաղաղութեան, այլ՝ Հայաստանին նկատմամբ յանելեալ ճնշումներու անփակելի դուռ մը պիտի բանայ:

Այնքան ատեն որ միջազգային օրէնքը թոյլ կուտայ պատմական իրենց հողին վրայ ապրող ժողովուրդներուն ինքնորոշուիլ, արդար է պահանջել իրենց պատմական հայրենիքէն բռնի տեղահանուած արցախցիներու վերադարձի իրաւունքը միջազգային երաշխիքներով եւ Ատրպեյճանի բանտերուն մէջ տառապող մեր ազգակիցներուն ազատ արձակումը:

2024-ը մտնենք գէթ այս յանձնառութեամբ, միշտ յիշելով որ Արցախի համար սերունդներ իրենց կեանքը նուիրեցին որպէս պայքարող ոչ թէ յանձնուող ազգի զաւակներ: Անոնց պանծալի յիշատակը նսեմացնելու իրաւունք չունինք ազգովին:

«Գ.»

-ՄԱԿ-ի ընդի. ժողովը 158 պետութիւններու ներկայացուցիչներու քուէարկութեամբ վերահաստատեց իր նախկին որոշումը՝ «Պաղեստինի ժողովուրդին գերիշխանութիւնը պաղեստինեան հողերուն, ներառեալ արեւելեան Երուսաղէմի բնական հարստութիւններուն վրայ, ինչպէս նաեւ սուրիացիներուն գերիշխանութիւնը Կոլանի բնական հարստութիւններուն վրայ»:

Քուէարկութեան ջմասնակցեցաւ 13 պետութիւն:



Որոշումը կը շեշտէ նաեւ, որ Իսրայէլ իրաւասութիւն չունի Կոլանի եւ Պաղեստինի հողը, շուրջ եւ ընդերքի հարստութիւնը օգտագործելու:

-Սուրիոյ Հանրապետութեան Նախագահութեան յատուկ խորհրդատու դոկտ. Պուսայնա Շաապան հանդիպում ունեցաւ Չինաստանի Արտաքին գործոց Նախարարութեան արեւմտեան Ասիոյ եւ Հիւսիսային Ափրիկէի վարչական տնօրէն Ուանկ Տիի եւ անոր ընկերակցող պատուիրակութեան հետ:

Հանդիպումին ընթացքին կողմէրը խորհրդակցեցան երկու երկիրներու գործակցութեան եւ ապագայ ծրագիրներուն շուրջ: Կողմերը ներկայացուցին տարբեր ոլորտներու մէջ գործակցութիւնը զարգացնելու առաջարկներ, զորս նախապէս ներկայացուցած էր Չինաստանի նախագահ Մի Ճին Պենկը՝ տարածաշրջանային ապահովութեան, մարդկային քաղաքակրթութեան զարգացման, տնտեսական բարգաւաճման, ինչպէս նաեւ գօտի եւ ճանապարհի նախաձեռնութեան ի նպաստ:



-Իրանի Իսլամական Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Հուսէյն Էմիր Ապտուլլահեան հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցաւ Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատի հետ: Կողմերը խորհրդակցեցան պաղեստինեան իրավիճակին, յատկապէս Կազգայի շուրջ եւ դատաւարտեցին Պաղեստինի ժողովուրդին դէմ իրագործուած իսրայէլեան եւ արեւմտեան իրարայաջորդ յարձակումները, որոնց հետեւանքով 20.000 քաղաքացի նահատակուեցաւ, մեծամասնութիւնը՝ փոքրեր եւ կիներ:



Նախարարները յայտնեցին, որ Սուրիոյ վարչապետ Հուսէյն Արնուսի Թեհրան վերջին այցելութիւնը արդիւնաւետ էր, շեշտելով երկու երկիրներուն միջեւ ստորագրուած համաձայնութիւնները եւ փոխըմբռնման յուշագիրները գործնականացնելու անհրաժեշտութիւնը, ինչ որ դրական անդրադարձ պիտի ունենայ երկու ժողովուրդներուն վրայ:

-Սուրիոյ Արտաքին գործոց Նախարարութիւնը հաղորդագրութեամբ յայտնեց, որ Սուրիոյ Արաբական Հանրապետութիւնը խստիւ կը դատապարտէ Իրանի Սեպսան եւ Պուլշիսթան քաղաքներուն մէջ գտնուող ներքին ապահովական ուժերու կեդրոնին վրայ գինեալ ահաբեկչական խմբաւորումներու կողմէ իրագործուած յարձակումները, որոնց հետեւանքով իրանեան ապահովական մարմինն եւ ներքին ապահովական ուժերն 12 անդամ նահատակուեցաւ, ինչպէս նաեւ ոստիկաններ վիրաւորուեցան:



Նախարարութիւնը շեշտեց, որ տարածաշրջանէն ներս ահաբեկչական գործողութիւններու սաստկացումը կը վկայէ ահաբեկչութեան զօրակցող ուժերուն ձախողութիւնը միջազգային եւ տարածաշրջանային մակարդակներով:

Նախարարութիւնը խորին ցաւակցութիւններ յայտնեց Իրանի ղեկավարութեան եւ նահատակներուն ընտանիքներուն, վերահաստատելով Սուրիոյ մշտական զօրակցութիւնը Իրանի, աւելցնելով, որ միջազգային ընկերութիւնը պէտք է դատապարտէ այս անմարդկային արարքը եւ յարմար պատիժի ենթարկէ յանցաւորները:

-Կիրակի, 17 Դեկտեմբեր 2023-ի գիշերուան ժամը 22:05-ին, Իսրայէլ բազմաթիւ հրթիռներ արձակեց Կոլանէն Դամասկոսի արուարձանին ուղղութեամբ:

Օդային յարձակումին հետեւանքով երկու գինուոր վիրաւորուեցաւ եւ նիւթական վնասներ արձանագրուեցան:



Սուրիական հակաօդային պաշտպանութեան համակարգերը դէմ դրին հրթիռներուն եւ վար առին անոնց մեծամասնութիւնը:

## ԳԱՄԻՇԼԻ ՄԵՋ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳՈՎ ՀԱՆԴԻՍԱԽՈՐԱՊԷՍ ՅԻՇԱՏԱԿՈՒԵՅԱԻ Ս. ՅԱԿՈԲ ՄԾԲԵԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՒ ՀԱՄԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Կիրակի, 17 Դեկտեմբեր 2023-ի առաւօտուն, Սուրբ Յակոբ Մծբնայ Յայրապետի եւ Գամիշլիի համանուն եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով, Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Եպիսկոպոսական Սուրբ եւ Ամմահ Պատարագ մատուցեց Գամիշլիի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ: Պատարագին ներկայ գտնուեցան



շրջանի ազգ. երեսփոխաններ, պատկան մարմինի ներկայացուցիչներ, Գամիշլիի թաղական խորհուրդը, ազգային վարժարաններու հոգաբարձութիւններն ու տնօրէնները, կիրակներէ ղարոցներու ուսուցչական կազմերը, բարեսիրական, մարզական, մշակութային միութիւններու եւ ազգային մարմիններու ներկայացուցիչներ եւ ուխտաւորներու հոծ բազմութիւն:

Սրբազան Յօր հանդիսաւոր թափօրը սկիզբ առաւ Փոխանորդարանի դահլիճէն եւ մուտք գործեց եկեղեցի «Յրաշափառ» շարականի երգեցողութեան ներքոյ:

Առաջնորդ Սրբազան Յօր առընթերականներն էին Յոգշ. Տ. Արմէն Աթղ. Գալաճեան եւ Աթղ. Տ. Պսակ Զինյ. Պերպերեան: Եկեղեցւոյ դպրաց դասին հոգեպարար երգեցողութեամբ հնչեցին հայ եկեղեցւոյ հարուստ շարականները:

Առաջնորդ Սրբազան Յօր հայրական պատգամին բնաբանն էր՝ օր-Շար.՝ էջ 6 ➤

## ԱՐԺԱՆԱՊԱՏԻ ՏԵՐ ՊՍԱԿ ԲԱԶՆԵԱՅ ՊԵՐՊԵՐԵԱՆ ՇԱԳԿԵԱՅ ՓԻՒՈՆ ԿՐԵԼՈՒ ՊԱՏԻԻՆ ԱՐԺԱՆԱՅԱԻ

Կիրակի, 17 Դեկտեմբեր 2023-ի առաւօտուն, Գամիշլիի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, յընթացս Ս. Յակոբ Մծբնայ Յայրապետի եւ համանուն եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին նուիրուած Եպիսկոպոսական Պատարագին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Յայրապետին տնօրինումով, Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ.



Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի ձեռնաբ. Թեմի հոգեւորականաց դասէն Աթղ. Տ. Պսակ Զինյ. Պերպերեան ծաղկեայ փիլոն կրելու պատիւին արժանացաւ: Ծեղիթի Առաջնորդական Փոխանորդ Յոգշ. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեան ընթերցեց Վեհափառ Յայրապետին սրբատար կոնդակը, ուր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Յայրապետ ընդառաջելով Առաջնորդ Սրբազան Յօր խնդրանքին, ճեղհիւր շրջանի հոգեւոր հովիւ Աթղ. Տ. Պսակ Զինյ. Պերպերեանին կը շնորհէ ծաղկեայ փիլոն կրելու արտօնութիւն, որ խթան պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու իր քահանայական ծառայութիւնը հայ եկեղեցւոյ անդաստանէն ներս:

## ՆՈՐ ՏԱՐԻՆ՝ ԱՄԱՆՈՐԸ

Նոր Տարին եւ Ամանորը կը յիշատակենք Յունուար ամսուն սկիզբը:

Իսկ ժամանակին ինչպէ՞ս՝ Ե՞րբ տօնուած են անոնք ... Ըստ Սուրբ Գրիգոր Տաթևացիի, Նոր Տարին սկսաւ տօնուիլ ճիշդ Բաբելոնեան աշտարակաշինութենէն ետք:

72 ազգերը ցրուեցան՝ իւրաքանչիւրը իր երկիրը ու ամէն մէկը սկսաւ տարեմուտը յիշատակել այն օրը, երբ մտաւ իրեն յատկացուած աշխարհը:

Նոյնը կը տեսնենք Նաեւ Աստուածաշունչին մէջ: Աստուած կը իրահանգէ հրեաներուն, որ առաջին ամիսը Եգիպտոսէն դուրս ելլելու ամիսը համարեն: «Ան թող տարուան առաջին ամիսը ըլլայ» (Ելք 12.2), կ'ըսէ Աստուած:



Երբ 72 ազգերէն իւրաքանչիւրը հասաւ իրեն սահմանուած երկիրը՝ այդ ամիսը համարեց ամիսներու՝ տարուան սկիզբ: Ահա այսպէս հրեաներու տարուան սկիզբը եղաւ Նիսան (Ապրիլ) ամիսը, հռոմեացիներունը՝ Յունուարը, հայերունը՝ Նաւասարդը (Օգոստոս) եւ այլն:

Սակայն քրիստոնէութիւնը պետականօրէն հաստատուելէ ետք, եկեղեցական հայրերը որոշեցին Նոր տարուան սկիզբը տօնել Յունուարին, որ ձմրան մէջ էր:

Ըստ քրիստոնէական ուսուցումներուն, ձմրան մէջ կարելի էր իւրայատուկ խորհուրդ մը նկատել:

Մինչեւ անոր բացատրութեան անցնիլը, Նախ տեսնենք, թէ ուրկէ՞ յառաջացած է Յունուար ամսուան անունը:

Յեթանասութեան շրջանին հռովմեացիները աստուած մը ունէին Յանուս անունով, որ երկու դէմք ունէր, մէկը կը Նայեր դէպի ետ, իսկ միւսը՝ առաջ: Այս կը խորհրդանշէր անցեալը՝ ապագան, անցնող՝ գալիք տարիները: Եւ ահա, ճիշդ անոր անունով ալ կոչուած է այդ ամիսը: Յիմնականը, քրիստոնէաները Նոր Տարին ձմրան կը նշեն, որն իր մէջ խորհուրդ մը կը կրէ:

Ձմրան, ամէն ինչ կը մեռնի, ինչպէս որ ցոյց կու տայ անոր անուան բառացի նշանակութիւնը՝ ձմեռ կամ ձիւնամեռ: Այսինքն՝ ձիւնէն ամէն ինչ կը մեռնի: Բոյսերը կը չորանան, ծառերը կը մերկանան, ջուրերը կը կը պաղին ու կը սառնին,՝ երկիրը ծաղկելէ ու ծնունդէ կը դադրի: Նոյնպէս՝ մեղքով մեռած հոգիները կը պաղին Աստուծոյ սերէն: Այս տեսանկիւնէն մեկնած, քրիստոնէայ Յայրերը տարուան սկիզբը ձմրան մէջ որոշեցին, որպէսզի մենք մեր մեղքերուն զազիր գործերը յիշելով՝ զոջանք մեր հոգւոյն խորքը:

Ձմեռը մեզի կը յիշեցնէ Նաեւ մեր ելքը այս կեանքէն, սակայն, քանի որ ան իր մէջ է՛ւս ապագայ յարութեան խորհուրդն ունի, հետեւաբար՝ կը յիշեցնէ յաւիտենական կեանքի մասին:

Իսկ ինչո՞ւ՞ այդ մեկամեայ ժամանակամիջոցը տարի կը կոչուի: Տարի կը կոչուի, որովհետեւ կը տանի մեր կեանքէն՝ ժամանակէն մաս մը, ամէն բան կը տանի եւ մեզի ոչինչ պիտի մնայ: Ուրեմն, պետք է՛ հոգանք միայն անցողիկ կեանքի նիւթական արժեքներուն համար, այլ՝ հոգեւորին՝ յաւիտենականին համար եւս:

**Յօդուածը կազմեց՝  
Յաննա Յարութիւնեանը  
Արեւմտահայերէնի վերածեց՝  
Նորա Տանակեօզեան-Մանսուրեան**



## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐ, ՔԱՂՈՒԲԱԾ ԴՈԿՏ. ՆՈՒՐԻ ԱԶԷԶԵԱՆԻ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ՆՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ «ԲԱԶՄԵՐԱԽՏ ՆՈԳԵՒՈՐԱԿԱՆԸ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԸ» ԳԻՐՔԷՆ

Գերշ. Ս. Սուրեն Ս. Արք. Գաթարոյեան

Աւագանի անունով Աբրահամ, ծնած է 21 Յունիս 1939-ին, Զալէպ, ուրֆացի ծնողքէ: Ան չորրորդ գաւազն եղած է Զալէպի Սրբոց Զառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ ծխատեր քահանաներէն՝ բարի Զովի եւ Նախանձախնդիր Եկեղեցական՝ Զոգելոյս Ս. Արսէն քհնյ. Գաթարոյեանի: Նախնական կրթութիւնը ստացած է Զալէպի Կրթասիրաց, Ուսումնասիրաց եւ Ազգային Զայկագեան վարժարաններէն:



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք ընդունուած է 1954-ին: Զինգ տարի ետք, 21 Յունիս 1959-ին, սարկաւագ ձեռնադրուած է ձեռամբ ճեզրի Զայոց Առաջնորդական Փոխանորդ Զոգելոյս Տաճատ Արք. Ուրֆալեանի: 24 Յունիս 1962-ին, կատարած է կուսակրօնութեան ուխտը: Արեղայ ձեռնադրուած է ձեռամբ՝ Երջանկայիշատակ Զարեհ Ա. Կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ եւ անուանակոչուած՝ Ս. Սուրեն Արեղայ:

Վարդապետական գաւազան ստացած է 3 Նոյեմբեր 1963-ին, ակարտաճառ ներկայացնելով «Զայոց. Եկեղեցւոյ Եօթը Խորհուրդներու Պատմական ու Կանոնական Զարգացումը՝ Զայոց. Եկեղեցւոյ Կանոնագրութեան Զամաճայն»:

Այդ շրջանին, Երանաշնորհ Զարեհ Ա. Կաթողիկոսի տնօրինումով, Անթիլիասի մէջ եղած է լուսարարապետ եւ ուսուցիչ Դպրեվանքի՝ դասաւանդելով Ս. Գրոց, քրիստոնէական եւ եկեղեցական երաժշտութիւն, հայ եկեղեցականի խորունկ նախանձախնդրութեամբ վարելով իրեն վստահուած վանական բոլոր պաշտօնները: Միաժամանակ 1962-1965 տարիներուն եղած է դասատու ուսուցիչ Ազգ. Մարտիկեան վարժարանէն ներս:

23 Դեկտեմբեր 1965-ին, որպէս Զոգելոր Զովի գործուղուած է Զանատայի Մոնթրէալ քաղաքը, ուր մնացած է ութ տարի: Ան բոլորանուէր կերպով ծառայած է մոնթրէալահայ գաղութին, մեծապէս սատարելով տեղւոյն Ս. Յակոբ եկեղեցւոյ եւ Զայ Կեդրոնի շինութեան աշխատանքներուն:

Ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք ստացած է 20 Յունիս 1969-ին, Երջանկայիշատակ Խորեն Ա. Կաթողիկոսի մոնթրէալահայ գաղութին շնորհած հովուապետական այցելութեան ընթացքին:

1973-ի Յունիսին, Խորեն Ա. Կաթողիկոսի տնօրինումով վերադարձած է Մայրավանք եւ ստանձնած՝ Դպրեվանքի փոխ տեսուչի, լուսարարապետի եւ դիւանապետի պաշտօնները միանգամայն: Ինչպէս նաեւ, 1973-1977 տարիներուն, դասատու ուսուցիչ եղած է Դըպրեվանքէն եւ Ազգ. Մարտիկեան վարժարանէն ներս: 1974-1976 տարիներուն եղած է կրօնաւանդ ուսուցիչ՝ Սոֆիա Յակոբեան երկրորդ վարժարանէն ներս:

5 Դեկտեմբեր 1976-ին, Ծայրագոնութեան աստիճան ստացած է ձեռամբ՝ Արտաւագ Արք. Թրթռեանի: 15 Յունիս 1977-ին, Բերիոյ Զայոց Թեմի Ազգ. Վարչութեան Խառն Ժողովին կողմէ ընտրուած է Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդական տեղապահ: Զալէպ ժամանած է 10 Սեպտեմբեր 1977-ին: 15 Զոկտեմբեր 1977-ին, Թեմի Ազգ. Գաւառական Ժողովին կողմէ ընտրուած է Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ:

30 Զոկտեմբեր 1977-ին, Եպիսկոպոս ձեռնադրուած է ձեռամբ՝ Երջանկայիշատակ Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոսի Մեծի Տանն

Կիլիկիոյ:

Երանաշնորհ Ս. Գարեգին Բ. Կաթողիկոսի Բերիոյ Զայոց Թեմին տուած հովուապետական անդրանիկ այցելութեան ընթացքին (29 Ապրիլ-12 Մայիս 1983-ին), 8 Մայիս 1983-ին, յընթացս Զալէպի Սրբոց Զառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ մատուցած հայրապետական Սուրբ եւ Անմահ Պատարագին, Ս. Սուրեն Եպիսկոպոսին շնորհած է Արքութեան պատիւ եւ տիտղոս:

Ժողովուրդին հետ եւ ժողովուրդին համար նշանաբանը իր հոգեւորականի կեանքին եւ հոգեւոր ծառայութեան ուղեգիծ ընտրած անձնորդ եկեղեցականը, զարմանալի ներդաշնակութեամբ յաջողեցաւ նոյնացնել իր անձն ու առաքելութիւնը, ամբողջական գիտակցութեամբ ընդունելով կոչումին երբեմն յուսադրիչ, բայց յաճախ սպառնիչ պարտաւորութիւնները հաւասարապէս, եւ որպէս Աստուծոյ ու ժողովուրդի քահանայ՝ ինքնաբաշխումի քրիստոսատիպ օրինակով մը նոր գոյն ու դիմագիծ տուաւ Բերիոյ պատմական Թեմին, որ վերածաղկումի, ինչու չէ, վերագարթօնքի նորագոյն պատումները արձանագրեց:

Իր հետեւողական աշխատանքներով Զալէպի եւ Բերիոյ Զայոց Թեմի գանազան շրջաններուն մէջ կառուցուեցան, վերանորոգուեցան կամ բարեգարդուեցան շարք մը եկեղեցիներ կամ ուխտավայրեր:

1993-ին, Բերիոյ Զայոց Թեմէն ներս հաստատուած է Ազգ. Առաջնորդարանի Սուրենեան ֆոնտը:

Սրբազան Զայրը ցարդ կը մնայ Բերիոյ պատմական թեմի ամենեւնեւ երկարամեայ Թեմակալ Առաջնորդը: Զսանհինգ բազմաբեղուն տարիներու ժամանակամիջոցի մը ընդմէջէն պատկառելի վաստակն է, որ կը ճառագայթէ եւ կը վկայէ իր անձին ու գործին մասին:

Զանատայ վերադառնալով, ան մինչեւ իր վախճանումը եղած է Առաջնորդանիստ Ս. Յակոբ եկեղեցւոյ հոգեւոր տեսուչ:

### ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

«Գանձասար» շնորհակալութիւն կը յայտնէ. **Տիկին Ռիթա Եագուպեան-Գարակիւլեանին, Տիար Զրաչ Յակոբեանին, Տիար Արա Մահսերճեանին, Տիար Ճորճ Ամպարճեանին, որոնք «Գանձասար»-ի 30-ամեակին եւ «Գանձասար» Բացառիկ հրատարակութեան առիթով նիւթական եւ բարոյական օժանդակութեամբ զօրավիգ կանգնեցան թերթին:**

### ԱՇԽԱՏԱՒՈՐԻ ԿԱՐԻՔ

**Վաճառականական գրասենեակ մը Սուլէյմանիէի մէջ կարիքը ունի 20-45 տարեկան աշխատաւորի մը, աշխատանքային 8 ժամով:**  
**Յետաքրքրուողները կրնան հեռաձայնել առաւօտեան ժամը 9:00-էն մինչեւ յետմիջօրէի ժամը 5:00 հետեւեալ թիւերուն 021 4653066 - 021 4603179:**

### «ԳԱՆՁԱՍԱՐ»

#### ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Խմբագիր՝ Զարմիկ Գիւլբօշեան-Պօղիկեան  
Սրբագրիչ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան  
Ձեւաւորող՝ Յովսէփ Զալօղլեան  
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան  
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան  
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պօղոսեան  
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Գիւլբօշեան  
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթի հաշուապահին հետ:



## Invictus

Յարութիւն Պերպերեան

**Չորսդիս կորսուող հայրենիք, չորսդիս կորսուող բառեր, չորսդիս մարդիկ աներդիք, չորսդիս ողբի խուլ ձայներ:**

**Չորսդիս կորսուող յոյսեր, յանձնումներ եւ աներում, դեռ մարմիններ կարեվեր, սուտ խոստումներ անհատում:**

**Ստրկացնող պայմաններ, սպառնալիք, հարկադրում, խաղաղութեան անուամբ դեռ Մեծ Եղեռնի ուրացում:**

**Թոյլ մի տար որ սահմանէն հայրենիքդ ուրիշներ, չմնայ անապաւեն երկիրդ որք ու անտեր:**

**Բայց գտնուած ենք այստեղ, գոյատեւած վերստին, կամքս ամուր է, ուժեղ, յոյս չեմ կապած երկինքին:**

**Պիտի ժայթքի անթեղուած վառ հրդեհը ցատումի, պիտի փշրին կաշկանդուած շղթաները արնալի:**

**Բաց ճակատով ստանձնէ մարտահրաւերը դժուար, պայքարի կամքով զինուէ եւ հաւատքով անսպառ:**

### ԳԱՄԻՃԼԻԻ ՄԵՉ Ե..

Սկիզբ՝ էջ 3

ուան անտարանական հատուածը (Ղկ 17.1-10), որուն ընդմէջէն Սրբազան Յայրը պարզեց երեք ճշմարտութիւններ, որոնք իրենց առաջինի կեանքով եւ ծառայութեամբ գործադրած են Ս. Յակոբ Մծբնայ Յայրապետ, Մարուգէ ճգնաւորն ու Մելիտոս եպիսկոպոսը.

Ա. Մեղքէ հեռու ըլլալ եւ ներողամտութեամբ վարուիլ մեր նմաններուն հետ: Այլ խօսքով, գաղթակցութենէ եւ մեղքէ հեռու մնալու համար անհրաժեշտ է, որ մեր հայեացքը կեդրոնացնենք Զրիստոսի վրայ եւ Իր օրինակին հետեւինք: Իսկ ներողամիտ ըլլալու համար սիրող սիրտ պետք է ունենանք, որովհետեւ ներողամիտ սիրտը քաջութիւն կ'ենթադրէ եւ քաջութեան աղբիւրը ճշմարիտ սերն է:

Բ. Հաւատքի գորութիւն ունենալ:

Գ. Ծառայութեան հոգի ունենալ:

Սրբազան Յայրը շնորհաւորեց Յակոբ անուըն կրող հայրորդիները եւ աղօթեց, որ Ս. Յակոբին ու բոլոր սուրբերուն բարեխօսութեամբ Աստուած ողորմի Յայաստանին, Արցախահայութեան, ծննդավայր Սուրիոյ, Լիբանանի եւ ողջ աշխարհին:

Պատարագի անարտին, Սրբազան Յայրը Ս. Յակոբի մատուցած մատաղի օրհնութիւն կատարեց:

Այնուհետեւ, սրբազան հայրը թափօր կազմած եւ «Ուրախ Լեր» շարականի երգեցողութեամբ դուրս եկաւ եկեղեցիէն, ուղղուելով դէպի Փոխանորդութեան շրջափակ, Հ.Մ.Ը.Մ.-ի Գամիշլի մասնաճիւղի փողերախումբին, տարագաւոր սկաուտներուն, դպրաց դասին եւ հոծ բազմութեան մասնակցութեամբ:

Այս առիթով, սրբազան հայրը իր հայրական օրհնութիւնները փոխանցելով բարձրօրէն գնահատեց Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Հոգ. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեանը, Ճեզիրէ շրջանէն ներս իր անձնուրաց ծառայութեան համար: Ան գնահատեց Արժ. Տ. Պսակ քիւլ. Պերպերեանը, ազգային երեսփոխանները, պատկան մարմինի անդամները, Գամիշլիի, Հասիչի եւ Տերիքի թաղականութիւնները, Տիկնանց միութիւնը, ազգային վարժարաններու հոգաբարձութիւններն ու տնօրէնները, կիրակնօրեայ դպրոցներու ու սուցչական կազմերը, ազգային մարմիններու ներկայացուցիչները եւ գամիշլիահայութեան բարեսիրական, մարզական եւ մշակութային միութիւնները, որոնք մեծ սիրով եւ համագործակցութեամբ կը շարունակեն իրենց վստահուած ազգանուէր եւ եկեղեցանուէր ծառայութիւնը:

### ՀԱՅ ԱՆԵՏԱՐԱՆԱԿԱՆ...

Սկիզբ՝ էջ 8

Բեթել եկեղեցւոյ՝ դպրոցի փառապանծ հարիւրամեակին կարեւորութեան, լուսարձակը բանալով Բեթել վարժարանի հարիւրամեայ պատմութեան մէջ իրենց դրոշմը ձգած երկու դեմքերու վրայ՝ Յովհաննէս Խոճա Յայտոսթեան՝ անոր որդին՝ վեր. Լուրթի Յայտոսթեան, որոնք իրենց գործունէութեամբ արձանագրած են պատմութեան գրեթէ մէկ-երրորդը: 1923-ի Մարտին Բեթել եկեղեցին՝ դպրոցը զուգահեռաբար բացուած են, սկզբնական շրջանին ունենալով 200 աշակերտ, նախակրթարանի 4 կարգերով՝ միայն երեք ուսուցչուհիներու օգնութեամբ: Ան բացատրեց, թէ Յովհաննէս Խոճա Յայտոսթեան եղած է բնաւորութեամբ համեստ, գիտելիքներով՝ հարուստ, նուիրեալ կրթական մշակ մը, շեշտելով որ Օսմանեան պատմութեան անգերագանցելի դասատու մըն էր Խոճան, որ իր մասնակցութիւնը բերելով Մարաշի մէջ կազմակերպուած Օսմանագիտութեան մրցանքի մը, առաջնութիւնը արձանագրած է: Յովհաննէս Խոճայի տնօրէնութեան շրջանը դժուար ընթացած էր, մանաւանդ սկզբնական շրջանի անսպաստ պայմաններուն մէջ, սակայն սերտօրէն համագործակցած է եկեղեցւոյ իրերայաջորդ հովիւներուն հետ: Շառոյեան յատկապէս անդրադարձաւ Յայտոսթեանի գրած վկայութիւններուն՝ «Պատմական վերջի-շումներ հեռաւոր անցեալէն» խորագրով պրակին, նկատի առած թէ ան եղած էր շարդին ականատես՝ հայկական թաղերու պաշտպանութեան կազմակերպիչներէն մէկը, որ թուրքերուն հետ բանակցութեան մէջ մտնելով, Մարաշէն նուագագոյն վնասներով հեռացում ապահոված էր հայերուն:

Բեթել վարժարանը հարիւրամեայ պատմութեան մէջ ունեցած է 15 տնօրէններ, որոնցմէ ամենէն երկարատեւ պաշտօնավարութիւն ունեցող տնօրէններէն մէկն էր վեր. Լուրթի Յայտոսթեան: Անոր ծառայութեան տարիները յատկանշուած են կարգապահական՝ հայեցի դաստիարակութեան ուշագրաւ իրագործումներով, միշտ սաստելով բժախնդրօրէն գործածելի Յայտեան լեզուն: Ան եղած էր նաեւ Ջանիցի՝ Կիրակնօրեայ դպրոցի ծիրան ներս հոգեւոր դաստիարակ՝ պատրաստելով կիրակնօրեայ վարժարաններու դասագիրքերու շարք մը՝ հմուտ երաժշտագետ՝ ղեկավարելով երգչախումբ ու ձայնագրելով հոգեւոր երգարաններ:

Շառոյեան եզրափակեց յիշելով քանի մը վկայութիւններ վեր. Լուրթի Յայտոսթեանի մասին, ցանկալով որ լուսամիտ այս մշակներուն սերունդի վարքագիծը ուղեւոր մը ըլլայ մեզի:

Այնուհետեւ ուղիղ եթերով իր խօսքը ուղղեց Յայտոսթեան շառաւիղէն վեր. Դոկտ. Փոլ Յայտոսթեան, որ նախագահն է Պերպերի Յայկազեան Համալսարանի, ինչպէս նաեւ նախագահի տեղապահն է Մերձաւոր Արեւելքի Յայ Աւետարանական եկեղեցիներու:

Ան իր շնորհաւորանքը փոխանցելով, փառաբանութիւնը բարձրացուց առ Աստուած, որ ծնունդ տուած էր Բեթելին որպէս եկեղեցի՝ վարժարան, որ անհնարին սեպուած օրերու՝ պայմաններու մէջ դարձած է քրիստոնէութեան՝ հայկական առաքելութեան նուիրական կեդրոն, ի պատիւ բոլոր հովիւներուն, տնօրէնութեան՝ կրթական մշակներուն, որոնք Յայ Աւետարանական շահը կրած են հարիւր տարուան ընթացքին մինչեւ օրս՝ վեր. որկտ. Յարութիւն Սելիմեանի հեռատես՝ անխոնջ ծառայութեան օրերուն:

Ան երեկոն շաղախելով իր հօր եւ մեծ հօր յուշերով, շեշտեց որ Բեթելի գոյացումը պտուղն էր հաստատակամ գարթօնքի: Յիշեց թէ ինք Բեթելի մասին լսած է իր մանկութեան առաջին քայլերէն սկսեալ, իսկ իրենց ընտանեկան պատմութեան յուշերը շաղախուած են Բեթելին հետ մինչեւ 1959-թուական: Ապա խոնարհուեց ու ակնածանքով անդրադարձաւ իր մեծ հօր եկեղեցւոյ եւ վարժարանին հանդէպ ունեցած հաւատքին եւ անշեղ նուիրումին:

Վեր. Փոլ եզրափակեց ցանկալով որ Յայեան ու հայ աշխարհը, Հայաստանը, հայկական բոլոր գաղութներն ու կեդրոնները ապրին ներշնչուով՝ ստեղծագործեն իրենց նոր Բեթելները ու անձնուրացութեամբ տեր կանգնին իրենց ունեցած անարդի:

Ապա իր սրտի խօսքը ուղղեց Սուրիոյ Յայ Աւետ. Համայնքի Պետ Վեր. Դոկտ. Յարութիւն Սելիմեան, յայտնելով որ օրը պատմական է եւ սոյն ձեռնարկը առանձնաշնորհում մըն է ի տես գաղութին դիմագրաւած բազմապիսի դժուարութիւններուն, որոնք գոյութեանական են, իսկ մենք, իբրեւ դրօշակիրը մեր նախնիներուն ձգած անարդի, անցեալը ներկային կամքով դէպի ապագայ ուղղուելու յանձնառութիւնը ունինք: Ապա շարունակեց ըսելով՝

«Այսօր, այս սրահը հայ ժողովուրդի միասնութեան խորհրդանիշն է եւ այս միասնութեամբ եթէ երբեք մենք տողանցենք դէպի առաջ, յոյս կայ դիմանալու, արդիւնաբերելու, պահելու եւ պահպանելու»:

Վերապատուելի բարձր գնահատեց ներկայացումները բանախօսներուն, որոնք իրենց փորձառութեամբ ունկնդիրը պատմական տեղեկութիւններու իրագրէր դարձուցին մատչելի ոճով մը:

Վեր. Յարութիւն Սելիմեան շնորհակալութիւն յայտնեց նաեւ Վեր. Փոլ Յայտոսթեանին, որ Պերպերեան միացաւ ու իր հօր եւ մեծ հօրը պատմութեամբ շաղախեց օրուան երեկոն եւ իր միտքերով առաջնորդեց դէպի գալիք օրեր:

Վեր. Սելիմեան շնորհակալութեան խօսք ուղղեց կազմակերպիչ յանձնախումբին, որ հմտօրէն եւ ձեռնհասօրէն երեկոն ամեն մանրամասներով ձեւակերպեց, կազմակերպեց եւ մատչելի դարձուց:

Հուսկ, Բերիոյ Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Եպս. Ազգարեանի «Պահպանիչ» աղօթքով ձեռնարկը իր անարտին հասաւ, որմէ ետք ներկաները հիւրասիրութեան եւ ստացան օրուան յուշանուէր տետրերէն:

## Պրիմալեյտ

### ՕԴԱԿԱՅԱՆ



Մարուշ Երամեան

Հասայ Միւնիխ ուշացումով եւ փոխանակ մէկ ժամ վերջ յաջորդ օդանաւը ամենելու, չորս ժամ սպասեցի, մէկ ժամ դէպի Հանսովը թռչելու համար:

Յոգնած եւ շատ անքուն իջայ օդանաւէն: Սօտեցայ կրպակի մը, որ սուրճի եւ սենտուիչի տեսակներ կը ծախէր: Սպասեակը, որ նաեւ գանձիչն էր, խանդավառ եւ չափազանց շարժումներով կը սպասարկէր: Երբ կարգը ինձի եկաւ, ըսի.

-Կ'երեւի յոյն ես ... խանդավառութիւնդ հաճելի եւ փոխանցիկ:

Յոգնած եւ անքուն, պէտք ունէի այդ փոխանցուող խանդավառութեան: Բայց տղան - երեսուննոց մը - դէմքը ծամածռեց եւ օ՛Ֆ ըսելու անհամ շարժումով մը յաջորդ սպասողը հրաւիրեց իրեն մօտենալու:

Չարմանալիօրէն ցաւեցայ այս շատ փոքր, շատ աննշան միջադէպին համար: Օդակայանի մը մէջ, անծանօթ տղու մը այդ գրեթէ անարգական վերաբերումը ազդեց վրաս. մոռցեր էի որ հոս Գերմանիա է, անհաղորդ մարդոց երկիրը:



Ո՛ր հասեր է մարդը ...

Կար առեն, երբ ճամբորդութիւնը այնքան հաճելի բան էր, որ նոյն օդանաւին մէջ միասին ճամբորդող անծանօթներ կը սկսէին զրուցել, երբեմն բարեկամութիւններ կը ստեղծուէին եւ մարդիկ իրարմէ կը բաժնուէին այն համոզումով, որ փառք Աստուծոյ, տակաւին խէր կայ աշխարհի երեսին, տակաւին մարդը կրնայ մարդուն ընկեր կամ բարեկամ ըլլալ, անկախ իր բոլոր պատկանելիութիւններէն:

Կարծես «համաշխարհայնացումը» ամենէն առաջ այստեղ, օդակայանին մէջ կիրարկուէր է, կամ աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել՝ փորձարկուէր: Որովհետեւ ամենէն առաջ այստեղ է որ մարդիկ սկսան իրարու հանդէպ անտարբեր ըլլալ, մտածելով՝ քանի մը ժամուան համար զրուցելու եռանդ վատնելը անիմաստ յոգնութիւն է ...

Մանրակերտ աշխարհներէն օդակայանները, իրենց տարբեր երկիրներով եւ ժողովուրդներով: Այնտեղ «թշնամիներ» իրարու քով կամ իրարու ետեւ հերթի կեցած կը տեսնենք յաճախ՝ հնդիկներ, սիխներ եւ աֆղաններ, արաբներ եւ հրեաներ - թե՛ արդէօք արդէն պէտք է գիտնասներ կոչել զիրենք, Պաղեստինի վերջին ամիսներու դէպքերուն առիթով ամբողջ աշխարհին հետ Իսրայէլի դէմ բողոքի ձայն բարձրացուցած հրեաները նկատի անելով, կամ զիրենք չվիրաւորելու համար - սեւամորթներ եւ ամերիկացիներ եւ այլն:

Մաքուր, ընդարձակ եւ լուսաւոր սրահները, հակառակ խուռներամ բազմութիւններուն, գրեթէ լուռ են: Այնտեղ հասնողները, կարծես լռութենէն ազդուած, իրենք եւս ազմուկ չեն բարձրացներ, նոյնիսկ ամենէն աղմկոտ ազգերը:

Այլ բան մը եւս՝ դուք կռիւի հանդիպե՛ր էք օդակայաններուն մէջ: Բնաւ: Կամ գրեթէ բնաւ. թերեւս երբեմն, միայն մէկ ամ հարիւր տոկոսով:

Ասիկա հասկնալի է, որովհետեւ ճամբորդողները կամ շատ ուրախ են, իրենց սիրած-ծրագրած-սպասած ճամբորդութեան սկսելուն համար, կամ շատ տխուր, նայած թէ ինչո՞ւ կը ճամբորդեն: Այլ ինչո՞ւ կռիւ ընեն:

Նաեւ՝ երբ բոլորը իրենք զիրենք հեռու կը պահեն իրարմէ, վաւերական օտարներու նման, ի՞նչ նիւթի շուրջ տարակարծիք պիտի ըլլան եւ կռիւ ընեն:

Բոլորը այստեղ ժամանակաւոր են. կու գան տեղէ մը, կը սպասեն, յետոյ այլ տեղ կը մեկնին:

Ոչ ոք կ'ապրի օդակայանին մէջ - նոյնիսկ պաշտօնեաները որոշուած ժամերու կու գան-կ'երթան - բացի The Terminal ֆիլմին հերոսէն, որ ոչ մէկ երկրի քաղաքացի ըլլալուն, ստիպուէր էր օդակայանը ապրիլ որոշ շրջան մը ...

Այս բոլորը բան մը կը յիշեցնեն՝ ձեզի:

Կեանքը: Այո՛, կեանքը, որ ճի՛շդ այսպէս է՝ բարեկամ-թշնամիներ որոնք կողք կողքի կ'ապրին, եւ կ'ապրին իւրաքանչիւրը ի՛ր կեանքը, անկախ կողքինէն:

Օդակայանին միայն անկռիւ վիճակն է, որ նման չէ կեանքին:

Օդակայանին մէջ անցուած երկար ժամերուն ընթացքին, երբ կը դիտեմ անընդհատ հոսող մարդիկը, երբեմն անպարտաւորով, երբեմն հանդարտ գնացքով անցնող, ի տես կեանքին հետ ունեցած նմանութեան կը մտածեմ՝ ինչո՞ւ մենք ալ չենք կրնար անկռիւ, անպատեղազմ ապրիլ:

Որովհետեւ իբր թէ այդպէս իրարմէ հեռու, իրարու անհաղորդ ըլլալը պիտի օգնէ որ մարդ աւելի հանգիստ ապրի, ինքն իր մէջ կծկուած, խխունջի պէս ինքն իր վրայ ուղրուած ...

Բայց մարդը, ըլլալով ընկերային եակ, ճիշդ անասուններուն նման, չի կրնար առանձին ապրիլ, որքան ալ փորձէ, որովհետեւ այդ փորձը հարազատ չէ, այլ ներմուծուած գաղափար մըն է միայն:

Երբեմն շա՛տ երկար ժամեր կ'անցնենք օդակայանին մէջ, մեր յաջորդ թռիչքը սպասելով: Բայց չենք նեղանար, որովհետեւ գիտենք թէ, որքան ալ երկար ըլլան ժամերը, վերջ մը պիտի ունենան:

Չարմանալի ... Չե՞նք գիտեր, որ մեր կեանքն ալ, որքան երկար ապրիք, վերջ մը պիտի ունենայ:

Ուրեմն ինչո՞ւ են կռիւները ընտանիքներու միջեւ, եղբայրներու, ընկերներու, բարեկամներու միջեւ, ինչո՞ւ են պատեղազմները երկիրներու միջեւ: Պիտի մտածե՞ք՝ կրկին պարզ ունակ գաղափարներ ...

Բոլորս ալ գիտենք, թէ որքան աւելի հեշտ է պարզ ըլլալն ու կեանքը յստակ նայուածքով դիտելը:

Կան սակայն մարդիկ, որոնք նախ ամեն բան կը բարդացնեն, որպէս զի յետոյ իրենց վերագրուի «լուծումներ» գտնելու իմաստութիւնը:

Օդակայանները՝ ժամանակակից, արդիական Բաբելոններ, ուր անհաշուելի լեզուներ կը խօսուին: Բաբելոնի աշտարակին վերջը գիտենք ինչ եղաւ ...

Որքան լաւ պիտի ըլլար, եթէ կեանքն ալ օդակայանին պէս ըլլար՝ անկռիւ, բայց մանաւանդ՝ անպատեղազմ:

## ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՈՒՂԵՐԶ

Այսօր, ազգովին կը տագնապինք հազարամեայ մեր պատմութեան ներկայ անկայուն վիճակով, որ արդիւնքն է մեր հայրենիքի վերջին վերիվայրումներուն, որոնց հետեւանքով, մեր բոլորին ներշնչման աղբիւր՝ Արցախը, դժբախտաբար հասաւ ներկայ իր ցաւոտ իրավիճակին:

Հայ Օգնութեան Միութեան 73-րդ Համահայկական Պատգամաւորական Ժողովը եկաւ վերանորոգելու միութեանս առաքելութեան նկատմամբ մեր նուիրեալ անդամներուն ուխտն ու նուիրումը: ՀՕՄ-ը ինչպէս միշտ, իր կարողութիւններն ու աշխատանքը աննկուն կամքով ու հաւատքով ի գործ պիտի դնէ մեր ժողովուրդի բարօրութեան եւ հայրենիքի բարգաւաճման:

Տօնական նուիրաբեր այս օրերու լաւատեսութեամբ ու վերանորոգ յոյսերով, ՀՕՄ-ը, իր միաւորներով, կը շնորհաւորէ իր բոլոր համակիրներուն, նուիրատուներուն, բարերարներուն ու համայն հայութեան Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը, մաղթելով առողջ եւ արեւշատ տարի մը:

Տէրը հայոց աշխարհին թող տայ խաղաղութիւն, հայ ժողովուրդին՝ սեր միութիւն եւ ՀՕՄ-ի մեծ ընտանիքին՝ նորանոր յաջողութիւններ, որպէսզի կարենայ լիակատար սատարել մեր ժողովուրդին:



MERRY Christmas & HAPPY NEW YEAR

ԵՆՈՐՀԱՌՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՂ ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՐՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԵՂ ԵԿԵՂԵՑՑՈՅ ԵՒ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԼՍԱՐԱՆ

Երեքշաբթի, 5 Դեկտ. 2023-ին, հովանավորությամբ Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի պետ Վեր. Դոկտ. Յարութիւն Սելիմեանի, Հայ Աւետարանական համայնքապետարանի «Թեկիրեան» սրահէն ներս տեղի ունեցաւ ցուցահանդէսարան նուիրուած Հայ Աւետարանական Բեթել Եկեղեցւոյ եւ համալուծ վարժարանի 100-ամեակին:



Ձեռնարկին ներկայ էին Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աշգարեան, Արհիպատիկ Տ. Պետրոս Արք. Միրիաթեան, Սուրիոյ խորհրդարանի հայ երեսփոխաններ, ՀՀ Հիւպատոսութեան հորհրդական Դաւիթ Թադեոսեան, ՀՀ Մարդասիրական առաքելութեան խումբի գեղապետ Արկատի Տոնոյեան, հոգեշնորհ եւ արժանապատիւ հոգեւոր հայրեր, հալէպահայ կազմակերպութիւններու, կրթական, մարզական, մշակութային եւ բարեսիրական միութիւններու ներկայացուցիչներ, հայերե-



նաւանդ ուսուցչուհիներ եւ գրասեր ընտրանի մը:

Հանդիսութեան սկիզբը ներկաները մէկ վայրկեան յոտնկայս նահատակներուն յիշատակը յարգեցին, ետքը հնչեցին Սուրիոյ եւ Հայաստանի գոյգ քայլերգները:

Բացման խօսքով հանդէս եկաւ Հայ Աւետ. Բեթել Վարժարանի տնօրէնուհի՝ Լուսին Ապաճեան\_Չիլմբօշեան, վեր առնելով Բեթել եկեղեցւոյ եւ դպրոցին լուսաշող ծնունդը, ինչպէս նաեւ յոբելեանական սոյն նախաձեռնութեան նպատակը: 1923 թուականին Հայ Աւետարանական Բեթել Եկեղեցւոյ եւ վարժարանին հիմնադրումը ծնունդի մէկ անտիսն էր, շարդէն ճողոպրած եւ Հալէպ հաստատուած հայ ժողովուրդին: Աւետարանական Համայնքէն լուսամիտ անձերու անխոնջ աշխատանքով իրագործուած իւրայատուկ ծրագիր, որ մէկ առատադի տակ միտքի ու հոգիի լուսաւորութիւն ներշնչեց ժողովուրդի գաւակներուն:

Ձեռնարկին ցուցադրուած էին Բեթել Եկեղեցւոյ եւ դպրոցին իրենց ծառայութիւնը բերող հովիւներուն, այսօրուան Բեթել համալիրին մէջ

գործող կեդրոններուն, ինչպէս նաեւ այժմու հովիւին եկեղեցական, միջհամայնքային, պետական, ազգային եւ միջազգային յարաբերութիւններէն ու պարզեւտրումներէն հոյլ մը լուսանկարներ:

Ձեռնարկին գեղարուեստական յայտագիրով իրենց մասնակցութիւնը բերին՝ դաշնակախար Ռուզան Պարտումեան, մեկնաբանելով Յարութիւնեանի «Հայկական Պար»-ը, ինչպէս նաեւ Հայ Աւետարանական Բեթել Երկրորդական վարժարանի Ժ. Կարգի աշակերտուհի Արգիսա Շեհմէլեան, մեներգելով «Հարիւր Տարի» երգը, որ ծօնուած էր այս պատեհ առիթին: Երգին խօսքի հեղինակն էր՝ Տիրուկ Մարգարեան-Կարապետեան, իսկ երաժշտութեանը՝ Շողակաթ Աբարդեան-Սելիմեան:

Օրուան բանախօսներն էին՝ հալէպահայ մտաւորական, գրող եւ Համազգայինի Հայագիտական Հիմնարկի դասախօս Լեւոն Շառոյեան եւ փաստաբան, լրագրող ու Հայա-



գիտականի դասախօս Մարիա Գաբրիէլեան:

Բանախօսները հաւատի ու դպրութեան կեդրոն հանդիսացող Բեթել եկեղեցւոյ եւ վարժարանի 100 տարուան ներդրումին անդրադարձան՝ արտայայտիչ եւ դիպուկ մէջբերումներով, ինչպէս նաեւ լուսարձակի տակ առին Հայ Աւետ. Համայնքի պատմութիւնը, Բեթել եկեղեցւոյ, անոր հովիւներուն, վարժարանին ու անոր ակնառու կրթական մշակներուն առաքելութիւնը:

Մարիա Գաբրիէլեան իր ներկայացման երկու բաժիններուն մէջ բացատրեց, թէ ինչո՞ւ հիմնադրուած էր Հայ Աւետարանական Բեթել եկեղեցին, կեդրոնանալով ազգային նկարագրի՝ մարդկային արժանիքներու տէր ակներեւ անձնաւորութիւններու վրայ, որոնք գործած են 100 տարուան ընթացքին՝ որպէս օրինակ լուսաւորներու՝ նուիրեալներու, մեծաթիւ փաղանգէն, յիշեց վերապատուելի Ահարոն Շիրաճեանը, որ ծնած է Մարաշ, ուր ստացած է աստուածաբանական կրթութիւն, որմէ ետք անցած է ծառայութեան աշխատանքին: 1885-ին Վեր. Շիրաճեան Մարաշի մէջ դաժանօրէն կը ձերբակալուի թուրքերուն կողմէ ու կը բանտարկուի մերժած ըլլալուն համար ստորագրել թրքական անիշխանութեան մթնոլորտին եւ սպանդին հայերուն դէմ մեղադրանքները ներկայացնող հաստատագիր մը:

Մեծ եղեռնի արհաւիրքի օրերուն Վերապատուելին իրաշքով մը փրկուելէ ետք ընտանիքին հետ կը հասնի Հալէպ, մեծ ցատում կ'ապրի եւ անմիջապէս կը լծուի որբահաւաքի՝ օժանդակութեան աշխատանքներուն: Յուլիս 1915-ին հիմը կը դնէ Հայ Որբանոցին, ընդունելով հարիւրաւոր որբեր, մանաւանդ մահամերձները, շեշտելով թէ «ոչ մէկ հայորդի փողոցը պիտի կնքէ իր մահկանացուն, մենք տէր պիտի դառնանք անոնց, անտէր ու անտիրական պիտի չձգենք»: Վերապատուելի հայրիկը նաեւ շրջանի արաբներուն քով մեծ յարգանք ու հեղինակութիւն կը վայելէր եւ անոնց օգնութեամբ յաճախ կ'ազատէր ձերբակալութիւններէ:



Վեր. Շիրաճեանի կամ ընդհանրապէս Բեթել եկեղեցւոյ հարիւրամեայ պատմութեան մէջ ուշագրաւ կետ է նորարարութեան սկզբունքը, որուն ցայտուն օրինակը կը հանդիսանայ Վեր. Շիրաճեանը, երբ ան առիթներէն մէկուն կը իրաւիրէ Հայ Առաքելական եկեղեցւոյ Սրբ. Արտաւազդ Սիւրմէլեանը որպէս պատգամաբեր:



Բեթել եկեղեցւոյ ներկայացուցիչներուն այլ կարեւոր աշխատանքներէն մէկը եղած է Շերանոցի հիմնադրութիւնը, հիւղաւանի մէկ անկիւնը, մօտաւորապէս 30 ծերերով ու հաշմանդամներով, վեր. Շիրաճեանի նախաձեռնութեամբ ու հետամուտ աշխատանքով: ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոս ներկայացուցած է վերապատուելին ըսելով՝ «Գեղեցիկ մտածումներու՝ հմայիչ գաղափարներու սիրահարը ըլլալէ անդին, ամուր սկզբունքներու մարդը եղաւ, իրեն համար միշտ ալ եկեղեցին՝ ազգը մնացին ամէն բանէ վեր՝ մեր ազգային պահանջատիրութեան դրօշակիրը դարձաւ»: Վեր. Վերապատուելի հիմնադրուած է եւ կրօնական եւ կրթական նպատակներով, հաւատի ու դպրութեան այս կեդրոնը շաբթուան մէջ ծառայելով որպէս դպրոց, հիւղաւանային ժամանակաշրջանին 1923-1932, հոգեւոր հովիւ ունեցած է վեր. Կարապետ Զեթեմեանը, որ իր բարեպաշտութեամբ միշտ ալ օժանդակած էր տարագրեալներուն նոյնիսկ իր անձնական գոյքերը ծախելով: Բեթել եկեղեցւոյ ներկայացուցիչներուն համար մեծ կարեւորութիւն ունեցած է մանաւանդ Նախակրթարանի ուսումնապահուիչը, ինչպէս նաեւ ցուցաբերած են բազմաթիւ օժանդակութիւններ, այդ նպատակին դիմաց ծառայած դժուարութիւնները յաղթահարելու

համար: Վեր. Ներսէս Խաչատուրեան շատ ուշագրաւ բնութագրութիւն կը կատարէ եկեղեցւոյ եւ դպրոցի փոխյարաբերութեան մասին: Ան կ'ըսէ. «Եկեղեցին դպրութեան սիւնն է, իսկ դպրոցին պարտականութիւնն է օգնել մանուկին եւ անոր մէջ թաքնուած ուժերը երեւան հանել, փայլեցնել, Աստուծոյ փառք տալու համար»:

Գաբրիէլեան կ'աւելցնէ թէ ուսման կողքին մտահոգիչ եղած էր նաեւ երիտասարդութեան կազմակերպութեան հարցը ու անոնց հոգեւոր ու մտաւոր դաստիարակութիւնը, ուստի այս գործը յանձն առած էր վեր. Արամ Հատիտեան:

Սկզբունքային էր հայ լեզուն անաղարտ պահելու հարցը, մանաւանդ տիրող թրքախօսութեան դէմ պայքարը:

Հայ Աւետարանական Բեթել եկեղեցին հարիւր տարուան ընթացքին եղաւ ազգային, այս գաղափարը հանդիսացաւ եական դերակատարութիւն ունեցող եկեղեցւոյ մէջ, գործ հաւատացեալներուն կը շնորհէ պատկանելիութեան զգացումը:

Աւետարանական եկեղեցին նաեւ Աստուծուածաշունչի բառ ու բանով բարեպաշտութիւն ուսուցանելու կողքին, ազգասիրութիւն՝ հայրենասիրութիւն ուսուցանած է, անցնելով աշխարհաբարի՝ ունենալով բազմապիսի հրատարակութիւններ:

Յատկանշական է նաեւ վեր. Պարգեւ Աբարդեանի դերակատարութիւնը շինարարական, կազմակերպական՝ յարաբերական մարգարէն ներս, հմտօրէն ղեկավարելով թէ՛ ազգային եւ թէ՛ պետական յարաբերութիւնները, համազգային վերաշինութեան՝ լուսաւորման միտքի ջատագով հանդիսանալով:



Գաբրիէլեան նաեւ ներկայացուց եկեղեցւոյ պատմութեան մէջ աւելի քան երեսուն տարի գործող վերապատուելի դոկտ. Յարութիւն Սելիմեանի հովուապետութեան ժամանակաշրջանը, գայն բնութագրելով քանի մը սկզբունքային կետերով, որոնք են՝ նորարարական աշխատելաճ, ստեղծագործական մշակումներ, գերազանց յարաբերական աշխատանք, բծախնդիր քարոզչութիւն ի նպաստ մանաւանդ Հայ դատի՝ պահանջատիրութեան: Ան շեշտեց, որ անգերագանցելի են նաեւ վերջին տարիներուն կրթական՝ դաստիարակչական բնագաւառի մէջ արձանագրուած նուաճումները ու ամենէն տարու արդիական ծրագիրներու հետ առնչութիւն ստեղծելը:

Օրուան երկրորդ բանախօս՝ Լեւոն Շառոյեան իր ելոյթը սկսաւ անդրադառնալով Հայ Աւետարանական



## ԱՕ ԽԱՉԻ ԱՄԱՆՈՐԵԱՆ ՑՈՒՑԱՀԱՆՐԷԱ

Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, կազմակերպութեամբ Սուրիահայ Օգնութեան հաշի Շրջանային Վարչութեան, Շաբաթ, 2 Դեկտեմբեր 2023-ի միջօրէի ժամը 12:00-ին բացումը կատարուեցաւ ԱՕ Խաչի ամանորեան ամանորեան ցուցահանդէսին Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս, մասնակցութեամբ ԱՕ Խաչի Ձեռնարուեստի, Աշխատանցի, Մանկամտօրի, «Փեթակ» եւ «Շիրակ» վաճառատան յանձնախումբերուն, ինչպէս նաեւ ստավայրի երեք մասնաճիւղերու եւ Քեսապի «Մեղրի» եւ «Գետաշէն» մասնաճիւղերու վարչութիւններուն:



Վրայ յարձակման հետեւանքով ստեղծուած իրավիճակին, Սուրիոյ տնտեսական տագնապին, Շրջ. Վարչութիւնը այս տարի, եւս ըստ ամանորեան, կը ցուցադրէ իր յանձնախումբերու եւ մասնաճիւղերու

Սրահի մուտքին հայկական գաւառական տարազներով երկու երիտասարդուհիներ դիմաւորեցին սրբազան հայրը եւ հիւրերը:

ճոխ եւ իւրայատուկ արտադրանքը, որուն հասոյթը պիտի նուիրուի Արցախի բռնի տեղահանուած ժողովուրդին: Տարիներ շարունակ ու մինչ օրս ԱՕ Խաչը կը սատարէ հայ

Ցուցահանդէսին պաշտօնական բացումը կատարուեցաւ ձեռամբ սրբազան հօր, ներկայութեամբ



Եամբ Հոգշ. Ս. Մանուկ Վրդ. Պարիխանեանի, Հոգշ. Ս. Արմէն Աբղ. Գալաճեանի, Պատանայ Մարմինի ներկայացուցիչին, Համագործակցութեան Վարչութեան, Շրջ. Վարչութեան եւ «Ն. Աղբալեան» մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչներուն, գաղութի հայրենակցական միութիւններու ներկայացուցիչներուն, հիւրերու եւ խաչուհիներու:

մշակոյթին, ամանորեաններուն եւ հայկական ձեռագործներուն պահպանման: Ամանորի ցուցահանդէսը ծառայեցնելով այս նպատակին՝ զայն կ'անուանէ հայկական անեղնագործութեան մը անուամբ: Այս տարի ցուցահանդէսը նուիրուած է

ԱՕ Խաչի քայլերգի ունկնդրութենէն ետք, սրբազան հայրը ու ներկայ հիւրերը շրջեցան սրահին մէջ, այցելեցին եւ ծանօթացան ցուցադրուած աշխատանքներուն եւ հաղորդեցին իրենց տպաւորութիւնները՝ գնահատելով եւ արժեւորելով ԱՕ Խաչի ժրպշան անդամուհիներու տարած ազգօգուտ, նուիրեալ, բարի ու պտղաբեր



Վանի եւ Սվազի անեղնագործութիւններուն, որոնք զարգացրելու ստեղծուող ստեղծելով հասեր են մեզի՝ մեր մեծ մայրերուն ձեռնամբ»:



աշխատանքը: Այնուհետեւ Շրջ. Վարչութեան ատենապետուհի Չեփիւն Գեորգեան բարի գալուստի խօսքով ողջունեց ներկայները եւ ըսաւ. «Հակառակ մեր զոյգ հայրենիքներու դիմագրաւած բազմաթիւ դժուարութիւններուն՝ Ատրպէյճանի կողմէ Արցախի

իր խօսքի ամարտին ան շնորհակալութիւն յայտնեց Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանին՝ իր ցուցաբերած հոգատարութեան համար, ինչպէս նաեւ ցուցահանդէսի բոլոր մասնակիցներուն, իրենց կամաւոր ծառայութեան համար:

Ապա Ձեռնարուեստի Յանձնախումբի անդամ Մարիա Փայասեան ըսաւ. «Հայաստանի բոլոր գաւառներուն, քաղաքներուն մէջ կը զբաղէին անեղնագործութեամբ, անեղնագործ իրերով կը զարդարէին իրենց բնակարանները»:

Ցուցահանդէսին տեղեկութիւն-

ներ փոխանցեցին անեղնագործութեան մասին, յայտնելով որ անեղնագործական կեդրոններէն մէկը Վասպուրական Նահանգի Վան քաղաքն էր, որ Մեծ Եղեռնի օրերուն ոչնչացաւ: Հետագային երբ շարք մը արուեստներ իրենց գոյութիւնը պահեցին որբանոցներու մէջ, հայկական անեղնագործութիւնն ալ վերականգնեցաւ:

Միջոցին Սվազի եւ Վանի անեղնագործութիւններէն նմուշներ պարունակող տեսանիւթ մը ցուցադրուեցաւ:

Ապա Լիլիթ Նալպանտեան եւ Ալիսա Լախոյեան գողտրիկ շարժումներով Նազ Պար պարեցին:



Այնուհետեւ սրբազան հայրը իր սրտին խօսքը ուղղելով ըսաւ. «Ամէն բանէ առաջ փառք կու տանք Աստուծոյ որ այս տարի առիթ մը եւս շնորհեց մեզի ներկայ ըլլալու ԱՕ Խաչի կազմակերպած այս ցուցահանդէսին: Ո՞ր կը կայանայ գաղտնիքը այս արուեստին՝ ստեղծագործութեան, բնականաբար կը կայանայ



հայ հոգիին մէջ, բայց աւելին՝ Հայաստան աշխարհի ներկայ թէ պատմական հողին ու ծառանգութեան մէջ:

Հայկական դրոշմը, հայկական նկարագիրը աստուածատուր շնորհք մըն է, գոր մեր ազգը կը վայելէ, եւ իսկպայէս այն կնիքն է, որ ուր որ երթանք, ուր որ գտնուինք մեր աշխատանքով, մեր արուեստով, մեր ստեղծագործութեամբ կ'արտացոլացնենք զայն ու կը զանազանուինք միւս ազգերէն»:

Ապա շնորհաւորեց ԱՕ Խաչի մեծ ընտանիքը, որ ամէն տարի բազմաթիւ առիթներով այսպիսի ցուցահանդէսներ կը կազմակերպէ ու հայկական ձեռարուեստը կը տարածէ:

Սրբազան Հայրը եզրափակեց իր խօսքը խաղաղութիւն մատթելով Սուրիոյ եւ վերելք՝ Հայաստան աշխարհին:

Սրահին մէջ ցուցադրուած էին

հայկական ձեռագործի գեղեցկագոյն գոհարներ՝ Մարաշի, Այնթապի, Սվազի, Վանի, Ուրֆայի, Տիգրանակերտի, Մալաթիոյ, Լաստեւի Նորվեկիան գործեր:



Սրահին կեդրոնը նստած էր ձեռարուեստի յանձնախումբի ամէնէն երիտասարդ աշակերտուհին՝ Մեղրի Ալաճաճեանը, որ Վանի ձեռագործ կ'աշխատէր:

Ցուցադրուած էին նաեւ Ամաւորը խորհրդանշող տպածոյ սեղանի ծածկոցներ, մեքենագործ անձե-

ռոցներ, հայատառ հայկական սեղանի ծածկոցներ, բարձեր, տոնական առիթներու համար պատրաստուած որակաւոր հաւաքածոյ մը:

Սրահին մէջ ուշագրաւ էին ստավայրի մասնաճիւղերու շքեղագարդ սեղանները, զանազան տեսակի համադամ պաստեղներով, տուրմերով, կրկնեփուկներով, հրուշակեղենով, մրգեղենով, նշածաղէր,



ընտիր գինիներով ու խմիչքներով՝ վաճառքի ներկայացուած:

Փեթակ խոհանոցը իր մասնակցութիւնը բերած էր հայկական ճոխ ճաշատեսակներով եւ խմորեղէններով:

Շիրակ Պաշարի Յանձնախումբը ցուցադրած էր պաշարի տեսակակի:

Եւ դեռ ինչէր չկային սրահին մէջ... սեղանի մը վրայ Մանկամտօրի ընկերու հիներու ձեռնամբ պատրաստուած փոքրիկներու յատուկ քաղցրաւենիքի ծրարներ, տուրմով պատրաստուած կրկնեփուկներ, փոքրիկներու յատուկ անձեռոցներ, գլուխի



պանտեր: Այս բոլորը ներկայացուած էին ճաշակաւոր ու բժախնալիկ յարդարումով:

Ցուցահանդէսին ներկայ էին նաեւ տեղական լրատուամիջոցներ, ինչպէս «Գաճասար»-ն ու «Ռատիօ Երազ»-ը:

Սոնիա Չամպագճեան-Ճարպիկեան

# ԽՃԱՆԿԱՐ

## 2024 - ՎԻՇԱՊԻ ՏԱՐԻ



Համադրեց եւ պատրաստեց  
Գեորգ Պետիկեան

Ամեն տարուան նման, այս տարի եւս բազմաթիւ աստղագետներու եւ աստղաբաններու 2024 տարուան յատուկ բազմաթիւ եւ տեսակաւոր կայքէջերու վրայ հրապարակուած գուշակութիւններն ու անոնց մասին գանազան կարծիք-տեսակետները կարդալէ եւ ծանօթանալէ ետք, փորձեցինք մէկտեղել այդ բոլորը եւ համադրելէ ետք մեր ընթերցողներուն հրամցնել անոնցմէ ամենէն հետաքրքրականը, ընդհանրականն ու յատկանշականը:

Պետք է ըսել, որ գրեթէ բոլորն ալ համակարծիք են, որ 2024-ը բոլորովին տարբեր պիտի չլայ 2023-էն:



Շատեր կը պնդեն, որ նոյնիսկ ոչ միայն անոր շարունակութիւնը պիտի նկատուի, այլեւ պիտի դառնայ անոր անելի չարագործ տարբերակը:

Սակայն, միւս կողմէ, կան նաեւ որոշ թիւով բախտագուշակներ, որ վերեւ յիշուած ժխտական կէտերուն հակառակը կը հաստատեն:

Այսպէս, շատերուն համաձայն, մարդ արարածը ամենօրեայ նոր գիտութիւններու եւ գիտերու շնորհիւ՝ մեծ յառաջդիմութիւններ պիտի արձանագրէ: Ասոնք լաւատեսներն են: Արդ, նորութիւն մը չէ, երբ ըսեն՝

Չինական աստղագիտութիւնը մարդոց տարիները բաժնած է 12 կենդանիներու անուններով: Առաջին տարուան անունը սկսած է մուկով, անոր յաջորդած են՝ ցուլը, վագրը, ճագարը կամ նապաստակը, վիշապը, օձը, ձիւն, ոչխարը, կապիկը, աքլորը, շունը եւ խոզը: Այս ձեւով ամեն 12 տարին անգամ մը նոյն անասունը կը յիշուի չինական օրացոյցին վրայ: 2024 տարին վիշապի տարի է:

Չինական աստղագիտութեան մէջ վիշապը կը գրաւէ հինգերորդ դիրքը: Այս տարին կը սկսի երկուշաբթի, Յունուար 23-ին՝ խանդավառութեամբ, ուրախութեամբ եւ յոյսով, միշտ սիրոյ եւ խաղաղութեան մաղթանքներով եւ վիշապներու պարերով ու եղանակներով:

Կը նախատեսուի, որ վիշապի տարին իրեն հետ բերէ խաղաղութիւն, համբերութիւն եւ յաջողութիւն: Շատ մը չին աստղագետներու համաձայն, 2024 տարին պիտի ըլլայ փոխանցման տարի մը՝ նախորդ տարուան ընթացքին սկսած պատերազմին եւ 2024 թուականին հաւանական կայանալիք խաղաղութեան միջեւ:

Մէկ խօսքով՝ խաղաղութիւն մը, որուն կը յուսայ համայն մարդկութիւնը, եւ որ կը կարծուի թէ պիտի հաստատուի յառաջիկային եւ պիտի

գոյատեւէ ու քաղաքական, տնտեսական եւ ապահովական կայունութիւն պիտի ստեղծէ յաջորդող երկար տարիներու համար:

Անցեալ տարուան ընթացքին գանազան եւ բազմազան քաղաքական, տնտեսական ու գիտական իրադարձութիւնները, նորութիւններն ու զարգացումները նկատի ունենալով՝ աստղագետներ արդէն որոշ պատկերացում մը ունին 2024 թուականին պատահելիք դէպքերուն մասին: Բնականաբար աշխարհը մէկ օրէն միւսը ամբողջութեամբ պիտի չբարեփոխուի, քաղաքական կեանքը յեղաշրջում պիտի չապրի, եւ մարդոց տուներուն մէջ յանկարծ ոսկիի, տոլարի եւ կամ այլ տեսակի դրամներու պարկեր պիտի չյայտնուին:

Դէպքերն ու ամեն տեսակի իրադարձութիւնները իրենք զիրենք կը մատնենարդէն եւ 2023 թուականի քաղաքականութեան հետեւած անձերուն կը յուշեն, թէ ինչպիսի՞ զարգացումներ տեղի պիտի ունենան այս նոր տարուան ընթացքին:

Իսկ ինչ կը վերաբերի վիշապին եւ անով ճանչցուած այս նոր տարուան, աստղաբաշխները կ'ընդունին, որ վիշապը կը մարմնաւորէ կամ կը պատկերացնէ որոշ չափով կեանք, մեծութիւն, հզօրութիւն եւ նաեւ օրինութիւնները ու տուող: Իրենց համար վիշապը կը խորհրդանշէ նաեւ կրակ, հմայք եւ խորհրդատու:

Ուստի, հիմնուելով իրենց այս տուեալներուն վրայ, վիշապի տարին ծնած անհատը կ'ըլլայ տաղանդաւոր, շատ մը ծրագրեր իրականացնող, իր ընտանիքին հաւատարիմ, միշտ օգտակար հանդիսացող եւ օգնութեան համար, իր «սրտէն» խօսող եւ սակայն՝ յամառ, որուն պատճառով դժուար է իր զգացումները պահել:

Կ'ըսուի նաեւ, որ անոնք սիրոյ մէջ դժբախտ կ'ըլլան եւ ասկէ մեկնած՝ կանուխ ամուսնութեան դէմ են:

Անոնք ընկերութեան մէջ փնտռուածներն են եւ իրենց ընտրած կամ նախընտրած ասպարէզին մէջ՝ անապայմանօրէն յաջողածներ:

Թեւեւ վիշապները գերբնական ուժի յատկութիւններու տէր հսկայ կենդանիներ են, սակայն «երբեմն նոյնիսկ փոքր պատառ մը իսկ չեն կըրնար ծամել», ինչպէս կ'ըսեն:

Բայց, ինչ ալ ըլլան վիշապի մասին գրուած կամ տրուած ածականներն ու մակդիրները, լաւ կամ վատ կողմերը, ան իր յստակ եւ որոշ տեղը ունեցած է եւ տակաւին կը շարունակէ ունենալ չիններուն ու ներկայիս աշխարհի շատ մը ժողովուրդներուն կեանքին մէջ:

Ստորեւ՝ չինական տարիներու բաժանումները իրենց տարիներու դասաւորումով.

- 1. - Առնետ. - 1900-1912-1924-1936-1948-1960-1972-1984-1996-2008-2020
- 2. - Ցուլ. - 1901-1913-1925-1937-1949-1961-1973-1985-1997-2009-2021
- 3. - Վագր. - 1902-1914-1926-1938-1950-1962-1974-1986-1998-2010-2022

- 4. - Նապաստակ. - 1903- 1915-1927-1939-1951-1963-1975-1987-1999-2011-2023
- 5. - Վիշապ. - 1904-1916-1928-1940-1952-1964-1976-1988-2000-2012-2024
- 6. - Օձ. - 1905-1917-1929-1941-1953-1965-1977-1989-2001-2013-2025
- 7. - Ձի. - 1906-1918-1930-1942-1954-1966-1978-1990-2002-2014-2026
- 8. - Ոչխար. - 1907-1919-1931-1943-1955-1967-1979-1990-2003-2015-2027
- 9. - Կապիկ. - 1908-1920-1932-1944-1956-1968-1980-1992-2004-2016-2028
- 10. - Աքլոր. - 1909-1921-1933-1945-1957-1969-1981-1993-2005-2017-2029
- 11. - Շուն. - 1910-1922-1934-1946-1958-1970-1982-1994-2006-2018-2030
- 12. - Խոզ. - 1911-1923-1935-1947-1959-1971-1983-1995-2007-2019-2031



Ուրեմն վիշապի տարի նկատուած են 1916, 1928, 1940, 1952, 1976, 1988, 2000-2012 2024 եւ 2036 տարիները:

Վերոնշեալ տարիներուն ծնած անձերը իրենց կեանքի տեւողութեան կրնան հանդիպիլ շատ մը անակնկալ վերիվայրումներու, սակայն միշտ կը գնահատուին իրենց արիւթեան եւ յատկապէս արտաքին տեսքին համար:

**Վիշապի տարիներուն ծնած նշանաւոր դէմքեր**  
Քոլին Փաուըլ, Ռոզան Պար, Սանտրա Պուլաք, Տայանա Շոր, Ճոն Լենըն, Յունի Մուլաքաք, Ֆրանսուա Միթերան:

Վիշապին նախընտրած թիւերն են՝ 3-4-21-35 եւ 45, իսկ նախասիրած գոյնը՝ դեղին:

**Նկարագրի կարեւոր գիծեր.**

Դժուարութիւններ յաղթահարող, անվախ, քաջ, հնարող, ջղային, ինքնագոհ, ինքնավստահ, ինքնապաշտպան, ամուրջ, շատ զգայուն, յաճախ շատ անխիղճ, զգացական, ծոյլ, երբեմն զգալիօրէն այլամերժ, շուտ ընկերացող, յաճախ մտերմիկ: Իրենց նախընտրութիւնն է կամ նախասիրած անարկաններն են՝ կամ հայելին եւ նկարչական գործիքը:

Վիշապի տարին ծնողները իբրեւ ասպարէզ կ'ընտրեն, կամ ալ կ'ուզեն դառնալ՝ դերասան, աստղագետ, համակարգիչի մասնագետ եւ ժողովրդային ծառայական պաշտօնէտ:

Հաւատք ընծայէ՞ք կամ ոչ, ձեզի կը մարդթեմ հաճելի անակնկալներով լեցուն, բախտաբեր եւ երջանկաբեր տարի մը եւ յոյսով եմ, որ նախատեսութիւններուն դրականները ըլլան իրական եւ ձեր կեանքը լեցուի միայն բարութեամբ, ամուրջութեամբ եւ յաջողութեամբ:

## Մարզական



Ռաֆֆի Սիկանյան

### ՏԵՂԱԿԱՆ

#### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸՆ

-Սուրիոյ պասքեթի տղոց Բ. դասակարգի փոխադասարանական դարձի վերջին փուլի մրցումներուն, ՅՄԸՄ-ի կազմը 77 - 73 արդիւնքով պարտութեան մատնեց ՅԵԸ-ի խումբը եւ գրաւեց խմբակի աղիւսակին առաջին հորիզոնականը՝ արձանագրելով իր երրորդ հերթական յաղթանակը:



-Սուրիոյ պասքեթի աղջկանց Ս -18 -ի մրցումներուն, ՅՄԸՄ-ի խումբը շարունակելով իր յաղթական երթը 76 - 46 արդիւնքով պարտութեան մատնեց Յուրիէն եւ հասաւ աւարտական փուլ, ուր մրցակից պիտի ունենայ Յալէպի Ահլին:

ՅՄԸՄ Յուրիէնի հետ հանդիպեցաւ երեք անգամ, որոնց ընթացքին երկու առիթով կրցաւ դուրս գալ յաղթական արդիւնքով:

-Սուրիոյ ֆութպոլի Ա. դասակարգի մրցումներու շրջագիծին մէջ, Յալէպի Ահլին շարունակելով իր ձախող արդիւնքները 2 - 0 արդիւնքով պարտութեան մատնուեցաւ Լաթաքիոյ Թըշիին: Յուրիէի խումբը դարձեալ չկրցաւ յաղթական արտուել իր մրցումը: Մինչեւ հանդիպման ժամանակաշրջանին աւարտը, Յուրիէն յաղթած էր 2 - 1 արդիւնքով. Իրաւարարը 9 վայրկեան յաւելեալ ժամանակ աւելցնելով տուգանային հարուած մը տրամադրեց Յըթինին, սակայն դարպասապահը յաջողեցաւ հեռացնել գնդակը: 104-րդ վայրկեանին, Յըթին կրցաւ նշանակել հաւասարութեան կողմ եւ հանդիպումը աւարտել 2 - 2 արդիւնքով: Մրցումէն ետք, Յուրիէի ակումբի նախագահ Անթուն Ծարքի իր դժգոհութիւնը յայտնելով չեղեալ յայտարարեց խումբին մասնակցութիւնը յառաջիկայ խաղերուն՝ մինչեւ ֆութպոլի դաշնութեան իրաւարարը յարմար տնօրինման մը ենթարկելը, նկատելով որ արձանագրուած արդիւնքը, ինչպէս նաեւ հանդիպումի ընթացքը արդար չէղան Յուրիէի համար:

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

#### ԶԵՍՓԻԸՆԸ ԼԻԿԻ 1/8 ՄԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՎԻՃԱԿԱԶԳՈՒՄԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ

Չուիցերիոյ Լիոն քաղաքին մէջ տեղի ունեցաւ Եւրոպայի Չեմպիոնը



Լիկի 1/8 փուլի մրցումներու վիճակաձգումը, որ կրեց հետեւեալ պատկերը:

Փորտո (Փորթուկալ) - Արսենալ (Անգլիա)

Նափոլի (Իտալիա) - Պարսելոնա (Սպանիա)

Փարիզ Սան ժերման (Ֆրանսա) - Ռեալ Մադրիտ (Սպանիա)

- Ինթըր (Իտալիա) - Աթլէթիքո Մատրիտ (Սպանիա)
- Էստիլլըն (Յոլանտա) - Պորուսիա Տորտոնա (Գերմանիա)
- Լացիո (Իտալիա) - Պալարմա (Գերմանիա)
- Կոփենհակէն (Դանիա) - Մանչեսթըր Սիթի (Անգլիա)
- Լայպցից (Գերմանիա) - Ռեալ Մատրիտ (Սպանիա)

1/8 եզրափակիչի առաջին հանդիպումները տեղի կ'ունենան 13, 14 եւ 20 Փետրուարին, իսկ դարձի հանդիպումները՝ 5, 6, 12 եւ 13 Մարտին:

#### ԽԱԶԲԱՌ (ՄԻ 469)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

#### Հորիզոնական

1- Ժողովրդական պատմութիւն, ուր կը գտնենք ժողովուրդի մը ազատութեան եւ անկախութեան համար մղուող պայքարին արձագանգները, նկարագիրն ու ձգտումները, որոնք կը մարմնաւորուին հերոսական տիպարներու միջոցով:

2- Նետ: Արական անուն:

3- Գեղարդ: Փոքրացնող մասնիկ:

4- Ծնողագուրկ: Հակառակ՝ ցուցական դերանուն: Ջարդ:

5- Հակառակ՝ հարցական դերանուն: Դուրս հեղուկ:

6- Խորք: Գոյութիւն ունէր: 7001:

7- Տառի մը հարեւանները: Հիւանդութեան առթած ջերմ: Դնդեր:

8- Հակառակ՝ թատերական գործողութեան բաժանում: Հակառակ՝ Սիւանթոյի ծննդավայրը:

9- Լեցուն: Եւ: Հակառակ՝ հարցական դերանուն:

10- Որսի շուն: Գետեզրի վրայ կախուող ճիւղերով ծառ:

11- Հակառակ՝ իգական օտար անուն: Բաջ:

12- Չաիրատի բանաստեղծութիւններու ժողովածուներէն (երկու բառ):

#### Ուղղահայեաց

1- Մեղադրանք: Արատ:

2- Բայական լծորդութիւն: Հակառակ՝ պիրկ հիւսուած բան: Ծաղիկի տեսակ:

3- Հակառակ՝ երբեք: Հակառակ՝ պատշաճ:

4- Ալքոլ: Լեզուով մը՝ այր: Խուզուած ու մաքրուած ոչխարի բուրդ:

5- Շնչերակ:

6- Արթնալ: Հակառակ՝ տառի մը անունը:

7- Հիմա: Արական անուն:

8- Կրկնուած ձայնաւորներ: Կրկնուած բաղաձայններ: Տարածքի միւտը: Հակառակ՝ տառի մը անունը:

9- Ակամայ թերացում: Հակառակ՝ շաղկապ:

10- Հետեւեալ խօսքին հեղինակը: «Առաջ անցէ՛ք, երիտասարդ, ուսանող հայրենակից: Պարզեցէ՛ք ձեր ձեռքերը՝ նշանակ ուխտի, եւ ուխտեցէ՛ք պատմութեան տօնին առջեւ, բայց մանաւանդ ձեր արիւնտ ժողովուրդին առջեւ, միշտ հաւատալ, միշտ երազել, միշտ պայքարի մէջ մնալ»:

11- Հակառակ՝ ժխտական նախածանց: Հակառակ՝ Էական բայ: Աղբիւր:

12- Հակառակ՝ 34: Հայիլ:

#### ԽԱԶԲԱՌ (ՄԻ 468)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ա	ն	տ	գ	ր	ա	շ	ի	ա	պ		
2	բ	ա	ր	ն		ե	տ	ք				
3	շ	գ	ն	ք	ի	ա	է		ի	կ		
4	ի	ժ	հ	ն	լ	ա		ա	ե			
5	լ	ա	լ	ն	վ	ա	լ	ա	լ			
6	ե	ա	ւ	է	ց			ք				
7	ա	ա	մ	ի	տ	ք	մ	ա	ք			
8	ք	ա	ն		կ	ձ	ա	հ	ի	ձ		
9	ի	ք	ա	մ	ա	տ	լ		լ	ի		
10	ե	տ	ի	ա	ք	ի	ա	ի		ւ		
11	ս		ք	ա	ւ	ա	գ	ա	ն			
12	ի	լ	Պ	ե	տ	ք	ն	ս		լ		

ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի  
25/12



4° 13°

Երեքշաբթի  
26/12



4° 14°

Չորեքշաբթի  
27/12



4° 14°

Հինգշաբթի  
28/12



4° 14°

Ուրբաթ  
29/12



4° 13°

Շաբաթ  
30/12



2° 12°

Կիրակի  
31/12



4° 11°

## ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԲԱՐՉՐԱՓՈՅՆ ՇՔԱՆՀԱՆՈՎ ՅԵՏ ՄԱՀՈՒ ԴԱՐՁԵԱՏՐՈՒԹՅԱՒ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՎԱՐՈՒԺԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Ուրբաթ, 15 Դեկտեմբեր 2023-ին, միջօրեի ժամը 1:00-ին, նախագահությամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գեորգ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, Գամիշլիի ազգային նախակրթարանի բակէն ներս տեղի ունեցաւ դպրոցի շինարարութեան յուշաքարի քողազերծում եւ Բերիոյ Հայոց Թեմի Ծառայութեան բարձրագոյն շքանշանի յետ մահու տուչութիւն՝ հանգուցեալ ճարտարապետ Վարուժան Կարապետեանի:



Արարողութեան սրբազան հօր կողքին ներկայ էին Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Գեորգ. Ս. Լեւոն Վրդ. Եղիայեան, Գեորգ. Ս. Արմէն Աբղ. Գալաճեան, Արժ. Ս. Պսակ Զինյ. Պերպերեան, Գամիշլիի երկրաչափերու սենտիքայի նախագահը, Գամիշլիի պատկան մարմինը, Ս. Յակոբ եկեղեցւոյ թաղական

Կարապետեանի վաստակին եւ ծառայութեան: Ապա, արքայան հայրը Բերիոյ Հայոց Թեմի Ծառայութեան:

Ծառայութեան: Ան իր ուրախութիւնը յայտնելով, շքանշանի տուչութիւնը համարեց բոլորին պարգեւատրումը:

Գեորգ. Ս. Լեւոն Վրդ. Եղիայեան, վեր առնելով շքանշանակիրին ծառայութիւնը, Գամիշլիի հայութեան անունով շնորհակալութիւն յայտնեց առաջնորդ սրբազան հօր եւ Ազգային Իշխանութեան՝ պարգեւատրումի այս գեղեցիկ արտայայտութեան համար:

Աւարտին, սրբազան հայրը փոխանցեց իր սրտի խօսքը: Ան իր ու-

ազգայիններուն, մեր եկեղեցւոյ եւ ազգի զաւակներուն ունեցած ծառայութեան նկատմամբ: Մեր եկեղեցւոյ, ժողովուրդին եւ ընդհանրապէս Սուրբոյ հայրենիքին իր ծառայութիւնը մատուցած անձին յիշա-



տակին դիմաց կը խոնարհիկը եւ անոր տուածը կը գնահատենք գէշ յետ մահու»:

Սրբազան հայրը յայտնեց, թէ պարգեւատրումները արթնութեան եւ զգաստութեան հրաւիրող առիթներ են, որպէսզի մենք եւս մեր ծառայութիւնը մատուցենք եւ խորապէս անդրադառնանք, որ մեր կեանքը ինքնանպատակ եւ աննպատակ չէ, այլ՝ նպատակադրեալ: Հետեւաբար, իւրա-



րախութիւնը յայտնեց մեր եկեղեցւոյ, ազգին եւ ժողովուրդին բարօրութեան, վերածաղկման եւ պայ-



եան բարձրագոյն շքանշանը յանձնեց հանգուցեալի տիկնոջ:

Յիշենք, որ Գամիշլիի մէջ շքանշանակիրը եղած է քաղաքապետարանի վարչութեան անդամ եւ ստանձնած է զանազան պաշտօններ: Եղած է ազգային վարժարաններու հոգաբարձութեան ատենապետ, թաղական խորհուրդի անդամ, Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկի յանձնախումբի անդամ եւ Հասիչէի երկրաչափութեան գրասենեակի անդամ, ապա՝ ատենապետ:

1989-ին, երկրաչափը եւ անմիջական հետապնդողը եղած է ազգային նախակրթարանի շինարար-

խորհուրդը, ազգային վարժարաններու հոգաբարձութիւնը, տնօրէնները, ուսուցչական կազմերը, մշակութային, բարեսիրական եւ մարզական միութիւններու ներկայացուցիչները, շքանշանակիրին ընտանիքն ու հարազատները:

Արժ. Ս. Պսակ Զինյ. Պերպերեան ընթերցեց վաստակաշատ հանգուցեալ ճարտարապետ Վարուժ Կարապետեանի կենսագրութիւնը:

Այնուհետեւ, սրբազան հօր եւ հանգուցեալ շքանշանակիրի տիկնոջ Արտա Միրզոյեան-Կարապետեանի ձեռամբ, դպրոցի բակէն ներս տեղադրուած մանկապարտէզի շէնքի տնօրէն-



րական աշխատանքներուն: 1996-ին ստանձնած է մանկապարտէզի շէնքի շինութիւնը եւ իր լրումին հասցուցած՝ 1997-ին: Ան իր մահկանացուն կնքած է 20 Փետրուար 1998-ին:

Այնուհետեւ, ներկաները համախմբուեցան Համազգայինի Աւետիս Ահարոնեան մշակութային կեդրոնէն ներս, ուր իր սրտի խօսքը փոխանցեց տիկ. Արտա Միրզոյեան-Կարապետեան: Ան այս առիթով շնորհակալութիւն յայտնեց առաջնորդ սրբազան հօր, Ազգային Իշխանութեան եւ անոնց, որոնք այս գեղեցիկ մտայղացումը ունեցան:

Գամիշլիի երկրաչափերու սենտիքայի նախագահը խօսք առնելով անդրադարձաւ շքանշանակիրին երկրաչափական վաստակին եւ



եան յուշաքարը քողազերծուեցաւ:

Ապա, Գեորգ. Ս. Արմէն Աբղ. Գալաճեան ընթերցեց առաջնորդ սրբազան հօր օրհնութեան գիրը, ուր սրբազան հայրը դրուատիքով անդրադարձած է շքանշանակիր հանգուցեալ ճարտարապետ Վարուժան



ծառայութեան համար իր կեանքի ծառայութիւնը որպէս լուսնայ ազգի զանձանակին մէջ դրած անձի մեծարման եւ պարգեւատրման առիթով:

Ան ըսաւ. «Եթէ յետ մահու գնահատեցինք եւ Բերիոյ Հայոց Թեմի Ծառայութեան մեծագոյն շքանշանով պարգեւատրեցինք հանգուցեա-

քանչիւրս, որպէս հայ ազգի զաւակ պարտաւորութիւն ունինք մեր կեանքը արժեւորելու եւ զայն իր ճշմարիտ նպատակին ծառայեցնելու համար մեր ծառայական լուսնայ բերելու:

Սրբազան հայրը Թեմի ժողովականութեան անունով շնորհաւորեց շքանշանակիրին տիկինն ու ըն-



լը եւ անոր յիշատակին իր կնոջ լամբակը գարդարեցինք այս շքանշանով, ոչ թէ պարգապէս բան մը ընելու սիրոյն կատարեցինք, այլ ըսելու, որ անհոգ եւ անտարբեր չենք մեր

տանիքը, Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդը եւ Գամիշլիի հայութիւնը, մարթելով, որ բոլորը ծառայական ոգիով շարունակեն իրենց վստահուած առաքելութիւնը: